

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՆԿԱԽ ԱԶԳԱՅԻՆ**

**ՄԵԽԱՆԻՉԱ**

**ԶԵԿՈՒՅՑ**

**ԵՐԵՎԱՆ 2011**

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>3</b>
<b>1. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄԱՐԿՆԵՐ.....</b>	<b>5</b>
1.1. Գերբնակեցման խնդիրը.....	5
1.2. Սանհիտարահիգիենիկ վիճակը.....	9
1.3. Սնունդը.....	14
1.4. Բուժսպասարկումը.....	17
1.5. Կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ.....	20
1.6. Այլ պայմաններ.....	22
1.7. Դոգերանական հիմնախնդիրներ.....	27
<b>2. ՀՈԳԵԲՈՒԺԱՐԱՆՆԵՐ .....</b>	<b>33</b>
<b>3. ՄԱՆԿԱՏՆԵՐ ԵՎ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏՆԵՐ.....</b>	<b>37</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում ներկայում առանձնակիորեն կարևորվում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի ստեղծումը: Ընդ որում, առանձնակի նշանակություն է տրվում դրամց համապատասխանությանը միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին, այդ ոլորտում ՀՀ ստանդանաժ միջազգային պարտավորություններին: Ընդ որում, դա հավասարապես վերաբերում է այդ ակտերով սահմանված պահանջների իրացման ապահովմանը ինչպես ՀՀ օրենսդրության մեջ, այնպես էլ իրավակիրառ պակտիկայում:

Խոսքը հատկապես վերաբերում է խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելմանը, այդ նպատակով անձի իրավունքների ապահովման գործուն երաշխիքների սահմանմանը: Զարցն առավել կարևոր նշանակություն է ձեռք բերում, եթե նկատի են ունեցվում այն վայրերը, որտեղ մարդիկ գտնվուն են ազատությունից զրկված վիճակում:

Այս համատեքստում կարևոր նշանակություն ունեն միջազգային հիմնարար այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիան, այդ կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը և այլն:

Նշված ակտերի թվում հատկապես պետք է առանձնացնել 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն), որը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2006 թվականի մայիսի 31-ին:

Արձանագրությամբ նախատեսվում է կանխարգելման անկախ ազգային մեխանիզմների ստեղծում, որոնք պետք է օժտված լինեն լայն իրավասությամբ ու երաշխիքներով՝ կապված տեղական մակարդակում բոլոր այն վայրեր անարգել այցելություններ իրականացնելու և համապատասխան ուսումնասիրություններ իրականացնելու հետ, ուր անձինք կարող են պահպել արգելանքի տակ:

Վերոգրյալի հիման վրա 2008 թվականի ապրիլի 08-ին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը լրացվեց 6.1-րդ հոդվածով, որով ՀՀ մարդու

իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) ճանաչվեց «Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ:

Այս առումով, ինչպես նշվել է Պաշտպանի՝ 2009 թվականի գեկույցում 2007 թվականին Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի իրականացման վերաբերյալ Եվրոպական համայնքների հանձնաժողովի՝ Յայաստանին վերաբերող գեկույցում դրական է գնահատվել Արձանագրության վավերացումը և Պաշտպանի պատասխանատվության ներքո դրանով նախատեսված ազգային մեխանիզմի գործունեությունը<sup>1</sup>:

Ընդ որում, Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեությունը միջազգային արդյունավետ փորձին համապատասխանեցնելու նպատակով Պաշտպանի և նրա ներկայացուցիչների կողմից համակարգային ուսումնասիրության է Ենթարկվել Եվրոպական Խորհրդի անդամ-երկրների (Սլովենիա, Խաղանիա, Լեհաստան, Վրաստան և այլն) ազգային կախարգելման մեխանիզմների կողմից ազատությունից զոկնան վայրեր այցելությունների իրականացման փորձը, դրա արդյունքում գեկույցների կազմման սկզբունքները:

Որպես կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ՝ Պաշտպանի ներկայացուցիչների կողմից 2010 թվականի ընթացքում իրականացվել են այցելություններ Յայաստանի Յանրապետությունում գործող քրեակատարողական հիմնարկներ, հոգեբուժարաններ, մանկատներ, տուն-ինտերնատներ՝ խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեպքերի բացահայտման և դրանց կանխարգելման նպատակով:

Մասնավորապես, կատարված այցելությունների ընթացքում վեր են հանվել նշված հաստատություններում գերբնակեցմանը, սանիտարահիգիենիկ վիճակին, բուժսպասարկմանը, անձանց տրամադրվող սննդին առնչվող, ինչպես նաև այլ խնդիրներ: Բացահայտվել են նաև քննարկվող ոլորտը կանոնակարգող ՀՀ ներպետական իրավական ակտերում առկա այնպիսի թերություններ, որոնց պատճառով անազատության մեջ գտնվող անձանց իրավունքների ու օրինական շահերի ապահովումը գործնականում դառնում է ավելի խոցելի:

Վեր հանված խնդիրները Ենթարկվել են համալիր հետազոտությունների, որոնց արդյունքների հիման վրա էլ կազմվել է սույն գեկույցը:

<sup>1</sup>Տե՛ս, [http://ec.europa.eu/world/enp/pdf/progress2008/sec08\\_392\\_en.pdf](http://ec.europa.eu/world/enp/pdf/progress2008/sec08_392_en.pdf):

## **1. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԵՐ**

### **1.1. ԳԵՐԲՆԱԿԵՋՄԱՆ ԽՄՆԴԻՐԸ**

2010 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ կատարված այցելությունների արդյունքում պարզվել է, որ 2009 թվականի համեմատությամբ իրավիճակը առանձնակի փոփոխություն չի կրել: Խոսքը հավասարապես վերաբերում է ինչպես նախնական կալանքի ենթարկված, այնպես էլ դատարանի դատավճռով դատապարտված ու պատիժ կրող անձանց:

Կատարված այցելությունները, սակայն, ցույց են տվել, որ վերոգրյալ պահանջները գործնականում ոչ միշտ են ապահովվում: Օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարի հիշատակված հրամանով «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի լրակազմը սահմանվել է 391 մարդ, մինչդեռ 2010 թվականի փետրվար ամսվա դրությամբ այդ հիմնարկում փաստացի գտնվել է 420 մարդ: Ընդ որում, նույն քրեակատարողական հիմնարկում նախորդ ամսվա մայիս ամսվա դրությամբ փաստացի գտնվել է 572 մարդ: Մասնավորապես, պարզվել է, որ «Նուբարաշեն», «Վարդաշեն» և «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկները գտնվում են գերբնակեցված վիճակում: «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի լրակազմը սահմանված է 840 մարդ, մինչդեռ 2010 թվականի մայիս ամսվա դրությամբ այդ հիմնարկում փաստացի գտնվել է 1241 մարդ, ինչը 181 մարդով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում այդ հիմնարկում գտնվող դատապարտյալների ու կալանավորված անձանց թիվը:

«Սևան» քրեակատարողական հիմնարկում նախատեսված 548 մարդու փոխարեն 2010 թվականի հուլիս ամսվա դրությամբ գտնվել է 722 դատապարտյալ ու կալանավորված անձ:

Կալանավորված անձանց և դատապարտյալների բնակեցման հետ կապված հստակ պահանջներ են սահմանված ինչպես միջազգային, այնպես էլ ՀՀ ներպետական իրավական ակտերով:

Այսպես, համաձայն 1955 թվականի օգոստոսի 30-ի ՄԱԿ-ի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 63-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի՝ ցանկալի է, որ հիմնարկում պահվող բանտարկյալների թիվը շատ մեծ չլինի, որպեսզի նրանց հանդեպ հնարավոր լինի կիրառել անհատական մոտեցում: Որոշ երկրներում համարում են, որ նմանատիպ հիմնարկների բնակչությունը 500 մարդուց չպետք է գերազանցի: Բաց հիմնարկներում պետք է պահել որքան

հնարավոր է քիչ բանտարկյալ: Մյուս կողմից, բանտերը պետք է ունենան համապատասխան չափեր, որպեսզի նրանցում հնարավոր լինի պատշաճ միջոցներ և սպասարկում ապահովել<sup>2</sup>:

Նմանատիպ տրամաբանությամբ են կառուցված նաև Եվրախորհրդի նախարարների կոմիտեի 1987 թվականի փետրվարի 12-ի թիվ R (87)3 հանձնարարականով հաստատված Եվրոպական բանտային կանոնները: Դրանցում, մասնավորապես, խոսվում է դատապարտյալի պահման վայրի ողջամիտ տարածության մասին (15-րդ կետ): Նմանատիպ դրույթներ են բովանդակում նաև նաև Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի 2006 թվականի հունվարի 11-ի թիվ Rec(2006)2 հանձնարարականով հաստատված Եվրոպական վերանայված բանտային կանոնները<sup>3</sup>: Հանցագործությունների հիմնահարցերի Եվրոպական կոմիտեի՝ Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ մեկնաբանությունների<sup>4</sup> 18-րդ կանոնը խոսում է յուրաքանչյուր բանտարկյալի համար նախատեսված նվազագույն տարածքի մարդկային արժանապատվությանը համապատասխանելու և գերբնակեցման անթույլատրելիության անհրաժեշտության մասին:

Ազատությունից գրկված անձանց պահման վայրերի գերբնակեցման բացառման, ինչպես նաև բնակելի տարածության սահմանված չափի պահպանման անհրաժշտության մասին դեռ 2006 թվականին նշվել է նաև Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի՝ ՀՀ կատարած այցելության արդյունքում կազմված՝ ՀՀ կառավարությանն ուղղված գեկույցում<sup>5</sup>:

Քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների բնակեցմանը վերաբերող նշված միջազգային պահանջներն իրենց արտացոլումն են ստացել ՀՀ օրենսդրության մեջ:

Այսպես, ըստ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի՝ բաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալը պահպում է մինչև տասը, իսկ կիսաբաց ուղղիչ հիմնարկում՝ մինչև վեց մարդու համար նախատեսված բնակելի կացարանում: Կիսափակ ուղղիչ

<sup>2</sup> Այս հարցը կարևորվում է նաև Բանտային բարեփոխումների միջազգային կազմակերպության մեկնաբանություններում (տե՛ս, <http://www.penalreform.org/making-standards-work-en.html>):

<sup>3</sup> Ste'u, Council of Europe. Recommendation Rec(2006)2 of the Committee of Ministers to member states on the European Prison Rules ([https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=Rec\(87\)3&Language=lanEnglish&Ver=original&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=Rec(87)3&Language=lanEnglish&Ver=original&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864)):

<sup>4</sup> European Committee on Crime Problems (CDPC). Recommendation Rec(2005) of the Committee of Ministers to member states on the European Prison Rules and Commentary ([https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CM\(2005\)163&Language=lanEnglish&Ver=add&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CM(2005)163&Language=lanEnglish&Ver=add&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864)).

<sup>5</sup> <http://www.cpt.coe.int/documents/arm/2007-47-inf-eng.pdf>:

հիմնարկում դատապարտյալը պահպում է մինչև վեց, իսկ փակ ուղղիչ հիմնարկում՝ մինչև չորս մարտու համար նախատեսված մեկուսացված խցում: Վերջին դեպքում հիմնարկի պետի պատճառաբանված որոշմանք դատապարտյալը կարող է խցում պահպել միայնակ: Բուժական ուղղիչ հիմնարկում դատապարտյալը պահպում է քրեակատարողական օրենսգրքով և իրավական այլ ակտերով կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար նախատեսված պայմաններում, բացառությամբ քրեակատարողական օրենսգրքով և իրավական այլ ակտերով բուժական ուղղիչ հիմնարկի համար նախատեսված առանձնահատկությունների: Բուժական ուղղիչ հիմնարկում կարող է ստեղծվել առանձնացված ստորաբաժանում կամ կացարան կամ խուց՝ դատապարտյալներին տարբեր մեկուսացվածության աստիճաններով պահելու նպատակով (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 103-107-րդ հոդվածներ):

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդվածը սահմանում է, որ ուղղիչ հիմնարկում մեկ դատապարտյալին հատկացվող բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից: Նույնպիսի պահանջ բովանդակում են նաև «Զերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 27-ի թիվ 41-Ն հիշատակված հրամանի 1-ին կետը: Ընդ որում, այս հրամանով նախատեսվում են նաև քրեակատարողական հիմնարկների լրակազմերը ինչպես կալանավորվածների, այնպես էլ դատապարտյալների համար:

Յուրաքանչյուր կալանավորվածին կամ դատապարտյալին հատկացվող բնակելի տարածության չափի ակնհայտ խախտման մասին են վկայում, օրինակ, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ստեղծված պայմանները: Այդ հիմնարկում գտնվող կալանավորվածների ու դատապարտյալների հետ հանդիպման ընթացքում վերջիններս հայտնել են, որ մինչև 8 հոգու համար նախատեսված խցերում, գերբնակեցվածության պատճառով, պահպում է մինչև 16-18 դատապարտյալ: Դրա համար էլ իրենք ստիպված են լինում քնել հերթափոխով:

Նման իրավիճակն ակնհայտորեն հակասում է միջազգային փաստաթղթերի պահանջներին: Մասնավորապես, Եվրոպական վերանայված բանտային կանոնների 18.4-րդ կետի համաձայն՝ ազգային օրենքը պետք է սահմանի կանոններով նախատեսված պահանջները երաշխավորող այնպիսի կառուցակարգեր, որոնք չպետք է խախվեն բանտերի գերբնակցման պատճառով: Նույն կանոնների 18.5-րդ կետը պահանջում է, որպեսզի բանտարկյալները գիշեր ժամանակ պահպեն անհատական խցերում, բացառությամբ եթե բանտարկյալի համար նախընտրելի է իր քնելու տեղը կիսել այլոց հետ: Ընդ որում, 18.7-րդ կետը պահանջում է, որպեսզի բանտարկյալին տրվի նախապես ընտրություն կատարելու հնարավորություն:

Դրանից բացի, «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի կիսաբաց տեսակի ուղղիչ հիմնարկի կացարաններում, կախված կացարանի տարածքից, միաժամանակ պահվում են 20-40 դատապարտյալներ: Այս դեպքում էլ ակնհայտորեն չի պահպանվում ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն այն մասին, որ կիսաբաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալները պետք է պահվեն մինչև 6 մարդու համար նախատեսված բնակելի կացարաններում:

Այսպիսով, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների ու կալանավորված անձանց գերբնակեցման խնդիրը ՀՀ-ում ծեռք է բերել առանձնակի արդիականություն և ունի հրատապ լուծման անհրաժեշտություն:

Ընդ որում, ազատությունից զրկման հետ կապված պատժի և հարկադրանքի այլ միջոցների դատապարտված անձանց գերբնակեցման հարցը ներկա ժամանակահատվածում մտահոգության առարկա է դարձել նաև այլ երկրներում:

Մասնավորապես, բանտերի անընդհատ աճող բնակչության վերաբերյալ մտահոգություն է հայտնվել Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի՝ Բանտերի գերբնակեցմանը և բանտային բնակչության աճի վերաբերյալ թիվ R99(22) հանձնարարականում<sup>6</sup>:

Սեր կարծիքով, գերբնակեցման հարցի լուծմանն էապես կարող են նպաստել այն միջոցները, որոնք հիմնականում կապված են ազատությունից զրկելու հետ կապված պատիժներին այլընտրանքային պատժամիջոցների նախատեսման, ազատությունից զրկման հետ կապված պատիժների և հարկադրանքի այլ միջոցների՝ իբրև ծայրահեղ միջոցների սահմանման, քրեակատարողական հիմնարկների շենքային կարողությունների հզորացման, ինչպես նաև կալանքը՝ որպես խափանման միջոց ընտրելու և անձին կալանքի տակ պահելու ժամկետը երակացնելու մասին համատարած որոշումներ ընդունելու դեպքերի նվազման հետ: Վերջինս իր հերթին դատավարական համապատասխան կառուցակարգերի շնորհիվ, կարծում ենք, պետք է լուծում ստանա նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում:

Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի նշված հանձնարարականում Եվրոպայի Խորհրդի անդամ-պետություններին առաջարկվում է նաև վերանայել քրեական օրենսդրությունը, ապաքրեականացնել մի շարք արարքներ կամ դրանց համար սահմանել ազատությունից զրկելու չկապված պատժամիջոցներ:

<sup>6</sup> Տե՛ս, Reccomendation No. R(99)22 of the Committee of Ministers to member states concerning prison overcrowding and prison population inflation// [http://www.coe.int/t/e/legal\\_affairs/legal\\_co-operation/prisons\\_and\\_alternatives/legal\\_instruments/Rec.R%2899%2922.asp](http://www.coe.int/t/e/legal_affairs/legal_co-operation/prisons_and_alternatives/legal_instruments/Rec.R%2899%2922.asp) (Adopted by the Committee of Ministers on 30 September 1999 at the 681st meeting of the Ministers' Deputies):

## 1.2. Սանիտարահիգիենիկ վիճակը

Քրեակատարողական հիմնարկների սանիտարահիգիենիկ վիճակի պահպանման հետ կապված պահանջներ են բովանդակում ինչպես միջազգային, այնպես էլ ՀՀ ներպետական իրավական ակտերը:

Մասնավորապես, ըստ Եվրոպական բանտային կանոնների 15-րդ կետի՝ այն վայրերը, որտեղ պահվում են բանտարկյալները, պետք է համապատասխանեն սանիտարիայի և հիգիենայի պահանջներին՝ կլիմայական պահանջների խստ հաշվառմամբ, հատկապես, եթե հարցը վերաբերում է օդափոխությանը, լուսավորությանը և ջեռուցմանը: Յամաձայն նույն կանոնների 17-րդ և 19-րդ կետերի՝ սանիտարական հարմարանքները և դրանց հասանելիությունը պետք է լինեն այնպիսին, որ յուրաքանչյուր բանտարկյալ ցանկացած պահ կարողանա հոգալ իր բնական կարիքները մաքրության պայմաններում: Բոլոր հիմնարկները պետք է լինեն պատշաճ վիճակում և մաքրու: 21-րդ կետը սահմանում է, որ ելնելով հիգիենիկ պահանջներից և նրանից, որ բանտարկյալները պետք է ունենան արժանապատիվ տեսք և պահպանեն հարգանք իրենց նկատմամբ, պետք է նախատեսել մազերի ու մորուքի համար հոգ տանելու համար անհրաժեշտ պայմաններ: Տղամարդկանց տրվում է կանոնավոր սափրվելու հնարավորություն:

Եվրոպական վերանայված բանտային կանոնների 19.1-19.7-րդ կետերը նույնպես բովանդակում են պահանջներ բանտերի սանիտարահիգիենիկ վիճակի ապահովման վերաբերյալ, որոնք պետք է համապատասխանեն մարդկային արժանապատվությանը և չխախտեն մարդու անձնական կյանքի գաղտնիությունը: Ընդ որում, սանիտարահիգիենիկ վիճակի ապահովման պահանջները վերաբերում են ինչպես բանտերի դեկավարությանը, այնպես էլ դրանում գտնվող բանտարկյալներին: Բանն այն է, որ ինչպես նշվում է Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ Յանցագործությունների հիմնահարցերի Եվրոպական կոմիտեի մեկնաբանություններում, գոյություն ունի ուղղակի կապ ինստիտուցիոնալ (բանտային) և անձնական հիգիենայի միջև: Բանտային դեկավարությունը պետք է բանտարկյալներին հնարավորություն տան մաքուր պահել իրենց և իրենց բնակտարածությունները, դրա համար ստեղծելով անհրաժեշտ պայմաններ: Կարևոր է, որպեսզի հիգիենայի ապահովման ընդհանուր պատասխանատվությունը բանտային դեկավարությունը վերցնի իր վրա<sup>7</sup>:

<sup>7</sup> See, European Committee on Crime Problems (CDPC). Recommendation Rec(2005) of the Committee of Ministers to member states on the European Prison Rules and Commentary

Ազատությունից գրկման վայրերում սանիատարահիգիենիկ վիճակի ապահովման վերաբերյալ դրույթներ են նախատեսված նաև Բանտարկյալների հետ վարվեցողության ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններով:

Պատշաճ պայմաններում գտնվող գուգարանային մասնաշենքերի մատչելիությունը և հիգիենիկ պայմանների ապահովումը դիտվել են որպես մարդկային միջավայրի կարևոր բաղադրիչներ Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի 2-րդ ընդհանուր գեկույցի 49-րդ կետում<sup>8</sup>:

Բանտարային հաստատությունների հիգիենային Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի մեկնաբանության լույսի ներքո անդրադարձել է նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ հակահիգիենիկ, հակասանիտարական պայմանները, որոնք հաճախ առաջ են գալիս գերբնակեցման պատճառով, ընդհանուր առմանք հանդիսանում են արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք (*Kalashnikov v Russia, appl. nr. 47095/99 – 15/07/2002; Peers v Greece, appl. nr. 28524/95 – 19/04/2001; Dougoz v Greece, appl. nr. 40907/98 – 06/03/2001*):

Անազատության մեջ անձանց պահման վայրերի սանիտարահիգիենիկ վիճակի պահպանմանը վերաբերող հիշատակված միջազգային պահանջները արտացոլվել են ՀՀ ներպետական օրենսդրության մեջ:

Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատապարտյալն ապահովում է առողջության պահպանման համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմաններով՝ զինծառայողների համար սահմանված չափանիշներով: Ըստ նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի՝ ուղղիչ հիմնարկում դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ չափանիշներին, ինչպես նաև ապահովի նրա առողջության պահպանումը:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 83-րդ հոդվածով դատապարտյալի առողջության պահպանմանն ուղղված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն է կրում ուղղիչ հիմնարկի վարչակազմը:

---

([https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CM\(2005\)163&Language=lanEnglish&Ver=add&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CM(2005)163&Language=lanEnglish&Ver=add&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864)):

<sup>8</sup>Տե՛ս, 2<sup>nd</sup> General Report [CPT/Inf (92)3] at para. 49:

«Զերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը պահանջում է կալանավորված անձանց համար ստեղծել սանհիտարահիգիենիկ պայմաններ: Նույն օրենքի 21-րդ հոդվածը սահմանում է. «...կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերն ապահովում են...կալանավորված անձանց առողջության պահպանման ուղղված սանհիտարահիգիենիկ եւ հակահամաճարակային պահանջների կատարումը: ...կալանավորված անձը պետք է հնարավորություն ունենա մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններում բավարարել իր սանհիտարահիգիենիկ պահանջները»:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Յայաստանի Յանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման (այսուհետ՝ Կանոնակարգ) 88-րդ կետը սահմանում է, որ նույնիսկ անձնական խուզարկությունը կատարվում է անձի պատիվն ու արժանապատվությունը չոտնահարելու սկզբունքով՝ պահպանելով սանհիտարահիգիենիկ նորմերը:

Այս ոլորտը կանոնակարգող կարևոր իրավական ակտ է նաև ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 413-Ն որոշումը, որով հաստատված են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց անկողնային և հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները:

Չնայած վերը նշվածին, ՀՀ արդարադատության նախարարության գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկները, ուր կատարվել է այցելություն, գտնվել են սանհիտարահիգիենիկ անընդունելի վիճակում: Ընդ որում, արձանագրվել է նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ, գործունեության 2009 թվականի գեկույցում: Այսինքն՝ քրեակատարողական հիմնարկներում առկա սանհիտարահիգիենիկ վիճակն ընդհանուր առմանք փոփոխություններ չի կրել:

Մասնավորապես, հիշյալ քրեակատարողական հիմնարկների (բացառությամբ «Յրազդան» քրեակատարողական հիմնարկի) ճաշասրահները, բաղնիքները, լվացքատները, զուգարանները և մյուս կոմունալ-կենցաղային օբյեկտները սանհիտարահիգիենիկ տեսանկյունից անմխթար վիճակում են և ենթակա են կապիտալ վերանորոգման: Անհրաժեշտ սարքավորումներով հագեցած է նաև «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի խոհանոցը:

Վերանորոգման կարիք ունեն նաև «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկների որոշ խցեր, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի անշահահաս

դատապարտյալներին պահելու մասնաշենքը, ինչպես նաև «Սևան» քրեակատարողական հիմնարկի ճաշարանը, բուժմասը, պատժախցերի մասնաշենքը, կացարանները (պետք է նշել, որ ընթացիկ տարում «Սևան» քրեակատարողական հիմնարկի որոշ կացարաններում արդեն սկսվել են իրականացվել վերանորոգման աշխատանքներ):

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում 2009 թվականի համեմատությամբ այս տարվա այցելությունների ժամանակ գրանցվել է տարածքների և շինությունների վերանորոգված լինելու փաստը, այդ թվում՝ խցերի, բաղնիքի վերանորոգումը: Սակայն, դեռևս շինությունների որոշ հատվածներ քանդվող վիճակում են, որոշ խցերում, հատկապես առաջին հարկում, հատակը քանդվում է, կան առնետներ: Կալանավորների բողոքը կայանում էր նրանում, որ առնետները սատկում են իրենց խցերի հատակի տակ, և տարածվող հոտը անհնար է դարձնում խցում լինելը: Դրանից բացի, հատակի տախտակների միջև առաջացել են ճեղքեր, որտեղից, ըստ դատապարտյալների, խցեր են անցնում տարբեր միջատներ. դրա պատճառ է անորակ շինարարությունը: Սա, իհարկե, սանիտարահիգիենիկ տեսանկյունից չի կարող դրական գնահատվել և կապված է ընդհանուր պայմանների անբարվոք լինելու հետ, ինչը հիմնարկի դեկավարությունը փորձում է հաղթահարել:

Սանիտարահիգիենիկ վիճակի ապահովման տեսանկյունից անընդունելի պայմաններ են արձանագրվել նաև քրեակատարողական հիմնարկների պատժախցերում: Դրանց թվում հատկապես պետք է առանձնացնել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը: Վերջինիս պատժախցերը գտնվում են կիսանկուղային հարկերում, ինչի հետևանքով պատժախցերը չափազանց խոնավ են, խիստ անբավարար է դրանց բնական լուսավորությունը: Սանիտարահիգիենիկ անբավարար պայմանների առկայությանը նպաստում է նաև այն, որ այստեղ առանձնացված չեն սանիանգույցները: «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի գերբնակեցվածության պատճառով չի ապահովվում կալանավորված անձանց ու դատապարտյալների պատշաճ լոգանքը: «Սևան» քրեակատարողական հիմնարկի պատժախցերը թեև գտնվում են առանձին մասնաշենքում, սակայն դրանցում բավարար վիճակում չեն բնական լուսավորությունը, բոլոր պատժախցերը հակասանիտարական և հակահիգիենիկ վիճակում են:

Պատժախցերի հետ կապված նկարագրված վիճակը չի համապատասխանում նախևառաջ միջազգային չափանիշներին: Մասնավորապես, Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 21-րդ կետը կտրականապես արգելում է կարգապահական զանցանքների համար՝ որպես ներգործության միջոց, չլուսավորվող մենախցում տեղավորելը: Իսկ Եվրոպական բանտարյան կանոնների

38.1-րդ կետը հնարավորություն է ընձեռնում բանտարկյալին տեղավորել ֆիզիկական կամ հոգեկամ առողջության համար վտանգավոր կարգապահական մենախցում միայն պայմանով, եթե բժշակական հետազոտումից հետո բժիշկը գրավոր կիավաստի, որ տվյալ բանտարկյալի առողջական վիճակը կարող է բույլ է տալ նման ներգործության միջոցի կրում:

Մարդու իրավունքների պաշտպանի 2009 թվականի գեկույցում արձանագրվել էր, որ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի պատժախցերի մասնաշենքը գտնվում է կիսանկուղային հարկում և շատ խոնավ է, որի մասին Պաշտպանը տեղեկացրել էր ՀՀ արդարադատության նախարարին: 2010 թվականի այցելության ընթացքում պարզվել է, որ այդ թերությունը վերացվել է, այդ մասնաշենքը չի գործում և ներկայում պատժախցերի մասնաշենքը գտնվում է 2-րդ հարկում:

Բոլոր քրեակատարողական հիմնարկներն ունեն փայտե հատակներ, բացառությամբ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի: Դրա հետ միասին, սանիտարահիգիենիկ տեսանկյունից բացասական պետք է գնահատել նաև այն, որ, ինչպես ցույց են տվել կատարված դիտարկումները, շատ քրեակատարողական հիմնարկներ (օրինակ՝ «Նուբարաշեն», «Գորիս» քրեակատարողական հիմնարկները) չունեն օդափոխման որակյալ համակարգեր, ինչն էլ առաջ է բերում կալանավորված անձանց ու դատապարտյալների դժգոհությունը: Ընդ որում, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի խցերի օդափոխման համակարգի անբավար վիճակի մասին նշվել է նաև Բանտային բարեփոխումների միջազգային կազմակերպության և վերջինիս գործընկերների «Ցմահ ազատազրկումը և այդ պատժի կրման պայմանները Հարավային Կովկասի երկրներում» վերտառությամբ 2009 թվականի համատեղ գեկույցում<sup>9</sup>:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկ կատարած այցելությունները ցույց են տվել, որ հիմնարկի կալանավորված անձանց պահելու մասնաշենքը կառուցելիս կոյուղագծերը ճիշտ չեն մոնտաժվել, ինչի հետևանքով դրանք հաճախակի վնասվում են, և կոյուղաջրերը հասնում են մինչև առաջին հարկ՝ վնասելով ինչպես խցերը, այնպես էլ քրեակատարողական ծառայողների աշխատասենյակները: Սա նախևառաջ բացասաբար է ազդում քրեակատարողական հիմնարկի սանիտարահիգիենիկ վիճակի վրա (ընդանուր առմամբ ողջ քրեակատարողական հիմնարկն իր բոլոր մասնաշենքերով ենթակա է վերանորոգման):

<sup>9</sup>Տե՛ս, <http://www.penalreform.org/pri-report-on-treatment-and-conditions-of-prisoners-serving-life-in-south-cau.html>:

Հիգիենայի պահպանման առումով՝ առանձին խնդիրներ կապված են նաև մահմերական կրոնը դավանող կալանավորվածների ու դատապարտյալների հետ: Օրինակ՝ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող օտարերկրյա մահմերական դատապարտյալները (հատկապես փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում), ելնելով կրոնական համոզմունքներից, իրենց բնական կարիքները հոգալուց հետո կատարում են լվացումներ, ինչը խիստ բացասական է ընդունվում խցում գտնվող քրիստոնյա դատապարտյալների կողմից և հաճախ առաջ է բերում կրոնֆլիկտային իրավիճակներ:

Պետք է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում առկա սանիտարահիգիենիկ անընդունելի պայմանները հաճախ պայմանավորված են լինում նաև կալանավորվածների կամ դատապարտյալների վարքագծով: Վերջիններս ոչ միայն չեն ծգտում բարելավել այդ վիճակը, այլև իրենք են նպաստում դրա ստեղծմանը:

Մինչդեռ, սանիտարահիգիենիկ վիճակի պահպանման պարտականություն կրում են նաև կալանավորված անձինք ու դատապարտյալները: Այսպես, Եվրոպական բանտային կանոնների 20-րդ կետը բանտարկյալներին պարտավորեցնում է կատարել անձնական հիգիենայի պահանջները: Կանոնակարգը կալանավորված անձանց և դատապարտյալների վարքագծի կանոնները թվարկելիս նախատեսում է, որ կալանավորվածներին պահելու վայրի խցում սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման համար սահմանվում է հերթապահություն (21-րդ կետ):

### 1.3. Սնունդը

Եվրոպական վերանայված բանտային կանոնները պահանջում են, որպեսզի ազատությունից զրկման վայրերում սնունդը լինի պատշաճ կերպով պատրաստված: Մասնավորապես, բանտարկյալներին սնունդ տրամադրելիս պետք է հաշվի առնել՝ ա) նրանց տարիքը, առողջական վիճակը, կրոնը, մշակույթը և աշխատանքի բնույթը, բ) սնունդը պետք է մանրամասն նկարագրվի ազգային օրենքում, գ) սնունդը պետք է պատրաստվի և տրվի հիգիենիկ պայմաններում, դ) պետք է մշտապես առկա լինի մաքուր խմելու ջուր և այլն:

Ըստ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 20-րդ կետի՝ բանտային հիմնարկը պետք է սովորական ժամին յուրաքանչյուր բանտարկյալի ապահովի նրա առողջությունն ու ուժերը պահպանելու համար բավականաչափ սննդարար, լավորակ, լավ պատրաստված ու

մատուցված սնունդով: Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է խմելու ջուր ունենա, երբ զգա դրա անհրաժեշտությունը:

Այս պահանջները ենթադրում են, որ քրեակատարողական իիմնարկներում պետք է աշխատանքի ընդունվեն սննդի պատրաստման համար պատասխանատու այնպիսի անձինք, որոնք կունենան համապատասխան որակավորում: Ավելին, բոլոր իիմնարկների խոհանոցային և խոհարարական պայմանները պետք է համապատասխանեն ժամանակակից պայմաններին և բժշկական պահանջներին:

Դատապարտյալներին պատիժը կրելու ընթացքում անհրաժեշտ սննդով ապահովելու հետ կապված հարցերը կանոնակարգվում են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 76-րդ հոդվածով. «1. Դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով, որի օրական միջին չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: 2. Սննդի որակը և սննդարարությունը սահմանված չափաբաժիններից որևէ կերպ պակասեցնելը, այդ թվում՝ որպես տույժի միջոց, արգելվում է: 3. Հղի, կերակրող մայր, անչափահաս կամ հիվանդ դատապարտյալն ապահովվում է հավելյալ սննդով, որի չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: 4. Դատապարտյալը պետք է ապահովված լինի խմելու ջրով»:

Կալանավորվածներ համար նույնաբնույթ պահանջներից զատ «Զերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է. «...կալանավորված անձն իր միջոցներով կարող է ձեռք բերել սնունդ և անհրաժեշտ ու չարգելված առարկաներ: Սննդամթերք եւ առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու կարգը սահմանվում է ներքին կանոնակարգով: ...կալանավորված անձի կողմից սննդի ընդունումից հրաժարվելու դեպքում...կալանավորվածներին պահելու վայրի պետը կամ նրան փոխարինող անձը պարտավոր է պարզել դրա պատճառները և այդ մասին հայտնել քրեական վարույթն իրականացնող, ինչպես նաև հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին: Սննդի ընդունումից հրաժարվելու փաստը չի կասեցնում...կալանավորված անձին այլ վայրեր տեղափոխելը և դատավարական գործողությունների մասնակցելը: Անհրաժեշտության դեպքում փոխադրումը կարող է իրականացվել բուժաշխատողի ուղեկցությամբ»:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական իիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները հաստատված են ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 413-Ն որոշմամբ:

Թե՛ իրականացված դիտարկումներով, թե՛ ազատությունից գրկված անձանցից ստացած տեղեկատվությամբ՝ քրեակատարողական հիմնարկի կողմից տրամադրվող սնունդը միատեսակ է, չի ապահովում դրա բազմազանությունը: Չնայած ՀՀ կառավարության նշված որոշմամբ սննդի սահմանված չափաբաժնների ցանկում ընդգրկված է նաև միրգ, սակայն այցելությունների ընթացքում չի արձանագրվել դրա առկայությունը:

Դիտարկված հիմնարկներից «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկնում դատապարտյալների և կալանավորվածների սնունդը պատրաստում են քաղաքացիական խոհարարները, և այդ հիմնարկում պահվող անձինք գոհ են սննդի որակից: Մյուս հիմնարկներում խոհարարները դատապարտյալներ են, որոնք չունեն համապատասխան կրթություն և աշխատանքային փորձ: Այդ պատճառով դատապարտյալների մեծ մասը դժգոհ է պատրաստվող ճաշերի որակից: Վերը նշված հիմնարկների ճաշարաններում դիտարկումներ կատարելիս նկատվել է, որ խոհանոցում աշխատող դատապարտյալներն իրենց համար առանձին են պատրաստում ճաշեր: Ընդ որում, քաղաքացիական խոհարարներ են գործել նաև «Յրազդան» քրեակատարողական հիմնարկում, սակայն 2010 թվականից դրանք դադարել են գործելուց:

Դրա հետ միասին, կատարված այցելությունների ընթացքում պարզվել է, որ «Երևան-Կենտրոն», «Նուբարաշեն», «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկների կալանավորված անձանց ու դատապարտյալների համար պատրաստված ճաշատեսակները համապատասխանում են սահմանված ճաշացուցակին, չնայած ճաշասրահների շենքերը ենթակա են կապիտալ նորոգման:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից, օրինակ, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում տրվող սննդի միատեսակության, դրա ոչ բավարար որակի, հիմնարկի տարածքում գործող խանութում վաճառվող սննդամբերքի ոչ մատչելի գների մասին նշվել է նաև Բանտային բարեփոխումների միջազգային կազմակերպության և Վերջինիս գործընկերների 2009 թվականի հիշատակված գեկույցի Յայաստանին վերաբերող հատվածում<sup>10</sup>:

«Երեբունի» քրեակատարողական հիմնարկ 05.02.2010թ. կատարած այցելության ընթացքում պարզվեց, որ դատապարտյալների համար պատրաստված «բրնձով և մակարոնով շիլային» ավելացվել է սահմանված պահանջներից պակաս՝ 5 տուփ պահածոյացված մսամբերք, յուրաքանչյուրը՝ 860 գրամ: Դրանով, փաստորեն,

<sup>10</sup>Տե՛ս, <http://www.penalreform.org/pri-report-on-treatment-and-conditions-of-prisoners-serving-life-in-south-cau.html>:

Խախտվել է ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի թիվ 413-Ն որոշման պահանջն այն մասին, որ մեկ դատապարտյալին տրամադրվում է օրական 90 գրամ միս: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տեղեկացվել է ՀՀ արդարադատության նախարարին և առաջարկվել է փաստի առիթով հանձնարարել իրականացվել ծառայողական քննություն:

Խնդրահարույց է նաև կրոնական համոզմունքներով որոշակի սնունդ չընդունող ազատազրկվածների սնվելու հարցը: Օրինակ՝ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվում են ազգությամբ իրանցիներ, որոնց կրոնական համոզմունքներով արգելվում է սննդի մեջ խոզի միս օգտագործել և այն օրերին, երբ ճաշը պատրաստվում է խոզի մսով, նրանք հրաժարվում են ճաշից:

Դակառակ դրան, Եվրոպական բանտարկին կանոնների 25.1-րդ կետը սահմանում է, որ սննդի հարցում դատապարտյալներին պահելու վայրի վարչակազմը պետք է հաշվի առնի նրանց կրոնական և մշակութային առանձնահատկությունները: Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 6-րդ կետը նույնպես պահանջում է հարգել հիմնարկի բնակչության այս կամ այն խնդիրն պատկանող բանտարկյալների կրոնական համոզմունքներն ու բարոյական նախադրույթները: Նույն պահանջները սահմանում են նաև Եվրոպական վերանայված բանտարկին կանոնների 22.1-րդ կետը:

Ինչ վերաբերում է ՀՀ օրենսդրությանն, ապա ինչպես «Զերբարկալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, այնպես էլ Կանոնակարգը կալանավորված անձանց և դատապարտյալների համար միայն նախատեսում են իրենց կրոնը դավանելու հնարավորություն (կազմակերպել կրոնական ծիսակատարություններ, օգտվել պաշտամունքի առարկաներից և հոգևոր գրականությունից և այլն): Սակայն սննդի հարցում որևէ պահանջ նշված իրավական ակտերը չեն բովանդակում, ինչն էլ գործնականում հանգեցնում է նկարագրված բարդությունների:

#### 1.4. Բուժսպասարկումը

Անազատության մեջ գտնվող անձանց բուժսպասարկմանն առնչվող հարցերը կարևոր տեղ են զբաղեցնում միջազգային փաստաթղթերուն. թե՛ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները, թե՛ Եվրոպական բանտարկին և վերանայված բանտարկին կանոնները լայն երաշխիքներ են ապահովում նշված հարցում:

Մասնավորապես, Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 22-րդ կետը սահմանում է, որ բանտի հիվանդանոցները պետք է ունենան սարքեր, կայանքներ և դեղամիջոցներ, որոնք անհրաժեշտ են հիվանդների պատշաճ խնամքի և նրանց բուժման համար, ինչպես նաև բավականաչափ որակյալ անձնակազմ: Ըստ նույն կանոնների 24-րդ և 25-րդ կետերի՝ բանտ ընդունելիս, եւ հետագա անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր բանտարկյալի պետք է ենթարկել բժշկական քննության, պարզելու համար նրա մարմնական եւ հոգեկան առողջությունը: Բանտարկյալների մարմնական և հոգեկան առողջության մասին պարտավոր է հոգ տանել բժիշկը, որը պետք է ամեն օր ընդունի կամ այցելի հիվանդներին, նրանց, ովքեր գանգատվում են հիվանդությունից, ինչպես նաև նրանց, ում հանդեպ հատուկ ուշադրություն է անհրաժեշտ:

Բուժսպասարկման առնչությամբ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածը դատապարտյալի հիմնական իրավունքների շարքում առանձնացնում է նաև վերջինիս՝ առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու իրավունքը: Այնուհետև, նույն օրենսգրքով նախատեսվում են նշված իրավունքի իրականացմանն ուղղված երաշխիքներ:

Ըստ «Զերբարկալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ կալանավորված անձն ունի առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն ստանալու, ինչպես նաև իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին զննվելու իրավունք:

Գործնականում կալանավորված անձանց ու դատապարտյալների բուժսպասարկումը կազմակերպելու նպատակով բոլոր քրեակատարողական հիմնարկներում ստեղծված են բուժմասեր: Բացի այդ, քրեակատարողական համակարգում գործում է նաև «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկը, ուր տեղափոխվում են ազատությունից գրկված այն անձինք, որոնց բուժումը բուժմասի պայմաններում հնարավոր չեն:

Քրեակատարողական հիմնարկի բուժմասի բժիշկները քրեակատարողական ծառայողներ են և գտնվում են հիմնարկի ղեկավարության ենթակայության տակ, ուստի խնդիրներ են առաջանում նաև բուժանձնակազմի անկախության և օբյեկտիվության հետ կապված: Դա հատկապես ակնառու է դառնուն այն ժամանակ, երբ հիմնարկում պահվող անձանց նկատմամբ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների կողմից կիրառվում է ֆիզիկական ուժ կամ անհրաժեշտություն է առաջանում նրանց տեղափոխել քաղաքացիական հիվանդանոց:

Քրեակատարողական հիմնարկներում բուժանձնակազմի հաստիքները, կախված հիմնարկի մեջությունից, բավական տարբեր են («Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ՝ 2 հաստիք, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ՝ 26 հաստիք): Գրեթե բոլոր հիմնարկներն ունեն հաստիքների համալրման խնդիր: Բացի դրանից, լուրջ խնդիր է հաստիքների համալրումը որակյալ մասնագետներով (օրինակ՝ շատ քիչ թիվ են կազմում բժիշկ բերապետները):

«Սևան» քրեակատարողական հիմնարկի բուժմասի հաստիքներից 2009 թվականի ընթացքում համալրված էր միայն մեկը՝ կրտսեր բուժ աշխատողինը (ֆելիշեր): 2010 թվականի այցելությունների արդյունքում պարզվել է, որ համալրվել է ևս երկու հաստիք՝ բուժմասի պետ և մեկ բժիշկ: Մնացած 4 բժիշկների հաստիքները թափուր են: Բացի այդ, նախկինում հիմնարկում Նշված համալրումից հետո Դրանում պահպող անձանց բուժսպասարկումը կազմակերպելու նպատակով շաբաթը մեկ անգամ մի քանի ժամով բժիշկներ էին գալիս «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկից: Նշված համալրումից հետո նման պրակտիկա այլևս չի գործում:

Եվ սա այն դեպքում, երբ Եվրոպական բանտային կանոնների 26.1-րդ կետն ուղղակիորեն պահանջում է ուղղիչ հիմնարկում ընդհանուր մասնագիտացման գոնե մեկ բժշկի առկայությունը: Ավելին, Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 22-րդ կետը սահմանում է, որ ամեն հիմնարկ իր տրամադրության տակ պետք է ունենա գոնե մեկ որակյալ, հոգեբուժության բնագավառում գիտակ բուժաշխատող: Իսկ նույն կանոնների 25-րդ կետը նախատեսում է բժշկի կողմից հիվանդ բանտարկյալներին ամենօրյա այցելություն:

Ըստ «Զերբարկալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի՝ կալանավորվածներին պահելու վայրում պետք է աշխատի ընդհանուր մասնագիտացում ունեցող առնվազն մեկ բժիշկ:

Տեղին է հիշատակել, որ Բանտային բարեփոխումների միջազգային կազմակերպության և Վերջինիս գործընկերների վերը նշված գեկույցի Յայաստանի վերաբերող հատվածում նշվել են, մասնավորապես, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ցմահ ազատազրկման դատապարտված անձանց բողոքներն այն մասին, որ քրեակատարողական հիմնարկում առկա է դեղամիջոցների և բժշկական սարքավորումների պակաս, գոյություն չունի մասնագիտացված բժշկական օգնություն<sup>11</sup>:

<sup>11</sup>Տե՛ս, <http://www.penalreform.org/pri-report-on-treatment-and-conditions-of-prisoners-serving-life-in-south-cau.html>:

Նման պայմաններում, իհարկե, անհնար է խոսել կալանավորվածների և դատապարտյալների՝ հիշյալ ակտերով սահմանված որակյալ բժշկական սպասարկման մասին:

### 1.5. Կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ

Արտաքին աշխարհի հետ կապի ապահովմանն առնչվող հարցերը առանձնակիրեն կարևորվում են դրանց վերաբերող միջազգային փաստաթղթերում:

Մասնավորապես, Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 37-րդ կետը, իբրև ընդհանուր կանոն, սահմանում է, որ բանտարկյալներին պետք է հնարավորություն տալ ինչպես գոագրության կարգով, այնպես էլ այցելությունների ընթացքում, կանոնավոր ժամանակահատվածների ընդունակությունով և հարկ եղած վերահսկողության տակ կապ պահպանել իրենց ընտանիքների և անբասիր վարկ ունեցող ընկերների հետ: Նույնպիսի պահանջներ է բովանդակում նաև Եվրոպական բանտային կանոնների 43.1-րդ կետը:

Դատապարտյալների կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կանոնակարգված է քրեակատարողական օրենսգրքի 92 հոդվածով, իսկ կալանավորված անձանց կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ՝ «Զերբարկալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածով: Այս հոդվածներով սահմանվում է, որ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու նպատակով հիմնարկներում պետք է ստեղծվեն կարճատև տեսակցության սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ, իսկ դատապարտյալների համար՝ նաև երկարատև տեսակցության սենյակներ:

Ընդ որում, ՀՀ-ում կանոնակարգման ենթարկված չեն տեսակցության (թե՛ կարճատև, թե՛ երկարատև) սենյակների չափերը, դրանց կահավորանքը, որի պատճառով բոլոր քրեակատարողական հիմնարկների տեսակցությունների սենյակները տարբեր են: Այս առումով աչքի է ընկնում, օրինակ, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կարճատև տեսակցության սենյակը, որն ապակեպատ սրահ է, դատապարտյալներն ու կալանավորված անձինք իրենց տեսակցության եկած անձանց հետ խոսում են հեռախոսով, ինչը բացառում է նրանց անմիջական շփումը: Բացի այդ, որոշ քրեակատարողական հիմնարկներում (օրինակ՝ «Կոշ», «Սևան», «Երեբունի») կան ինչպես ոչնչով աչքի չընկնող, այնպես էլ

այսպես կոչված «լուքս» սենյակներ. վերջիններից, սակայն, հիմնականում օգտվում են այդ հիմնարկների «հանցավոր հեղինակությունները»:

Քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Համատեղ բնակվելու իրավունքով և միայն մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն տրամադրվում է երկու ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև երեք օր տևողությամբ: Երկարատև տեսակցություն տրամադրվում է նաև դատապարտյալի հետ ամուսնության մեջ չգտնվող այն անձի հետ, որի հետ դատապարտյալն ունի համատեղ երեխա»: Մինչեւ, «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկն ընդհանրապես չունի երկարատև տեսակցության սենյակներ, դրանում պատիժ կողու դատապարտյալները չեն կարողանում օգտվել երկարատև տեսակցության իրենց իրավունքից:

Համաձայն՝ Կանոնակարգի 143-րդ կետի՝ «Մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ տեսակցությունն անցկացվում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի հսկողությամբ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի և դատապարտյալների համար նախատեսված երկարատև տեսակցությունների»: Բոլոր քրեակատարողական հիմնարկներում հսկողությունն իրականացվում է տեսանելիության սահմաններում՝ առանց խոսակցությունները լսելու: Այս կանոնից բացառություն է կազմում «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը, որտեղ երկարատև տեսակցության համար անհրաժեշտ սենյակների բացակայության պատճառով կարճատև տեսակցությունը կազմակերպվում է փոքր սենյակում, և տեսակցության ողջ ընթացքում սենյակում գտնվում է քրեակատարողական մեկ ծառայող ու լսում ամբողջ խոսակցությունը: Եվ դա չնայած այն բանին, որ տեսակցության սենյակի դռան վրա կա դիտանքը, որտեղից ամբողջ սենյակը հնարավոր է դիտել:

«Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից հսկողության նման ձևը պատճառաբանվում է նրանով, որ դա արվում է այլ անձանց կողմից արգելված իրերի փոխանցումը բացառելու նպատակով<sup>12</sup>: Նման պատճառաբանությունները, սակայն, չեն կարող արդարացված լինել, քանի որ Կանոնակարգի

<sup>12</sup> Ընդհանրապես «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի հետ կապված պետք է նշել, որ թեև այն իրավական առումով գտնվում է ՀՀ արդարադատության նախարարության ենթակայության տակ, բայց փաստացի գործում է՝ որպես ՀՀ ազգային անվտանգության ծառայության մեկուսարան. հիմնարկը գտնվում է Ազգային անվտանգության ծառայության վարչական շենքում, չունի առանձին մուտք, սեփական անցագրային կետ, հիմնարկ մուտք գործելու թույլտվություն տալիս է Ազգային անվտանգության ծառայությունը: Այս մասին նշվել է նաև ՀՀ Պաշտպանի՝ իբրև կանխարգելման անկախ ազգային մեխանիզմի գործունեության 2009 թվականի գեկույցում, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի հաշվետվություններում, սակայն մինչ օրս իրավիճակը չի փոխվել:

«Խուզարկություն, գննում և առգրավվում» վերտառությամբ 10-րդ գլուխը սահմանում է, որ արգելված իրերի, առարկաների և սննդամթերքի ներթափանցումը կանխելու համար տեսակցությունից առաջ և հետո քաղաքացիական անձինք ու ազատազրկվածները ենթակա են պարտադիր խուզարկության:

Բոլոր քրեակատարողական հիմնարկները ապահովված են քարտային հեռախոսներով, որոնցից օգտվելու հնարավորությունը սահմանված է Կանոնակարգի 180-րդ կետով: Ըստ 182-րդ կետի՝ կալանավորված անձին կամ դատապարտյալին հեռախոսակապից օգտվելու հնարավորություն տրամադրվում է համապատասխանաբար կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետի սահմանած ժամանակացուցով: Այսինքն՝ Կանոնակարգը դրա համար հստակ ժամկետներ կամ հաճախականություն չի նախատեսում: Նման կարգավորումը պատճառ է դարձել այն բանի, որ, օրինակ, «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալներն ու կալանավորված անձինք (լրակազմը՝ 60 մարդ) առավել քիչ են օգտվում հեռախոսակապից՝ մոտ 10 օրը մեկ անգամ:

Ուստի, նման իրավիճակներից խուսափելու նպատակով նշված հարցն անհրաժեշտ է սահմանել հենց Կանոնակարգով:

## 1.6. Այլ պայմաններ

ՀՅ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ կատարած այցելությունների ընթացքում ի հայտ են եկել այլ փաստեր ևս:

Մասնավորապես, Կանոնակարգի 62-րդ կետն այս կապակցությամբ սահմանում է. «Կալանավորված անձը կամ փակ կամ կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալը իր ցանկությամբ կարող է դուրս չգալ զբոսանքի: Կալանավորված անձի կամ դատապարտյալի զբոսանքից հրաժարվելու փաստն արձանագրվում է համապատասխան մատյանում»:

Ըստ Կանոնակարգի 173-րդ կետի՝ «Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչը կալանավորված անձից կամ դատապարտյալից վերցնելով նրա առաջարկությունները, դիմումները և բողոքները համապատասխան մատյանում կատարում է գրառում դրանք վերցնելու վերաբերյալ, որի մասին ստորագրում է նաև կալանավորված անձը կամ դատապարտյալը»:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2009 թվականի ընթացքում Կանոնակարգի մեջբերված կետերի պահանջներն ընդհանրապես չեն պահպանվել

«Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում. այստեղ նշված մատյաններն ընդհանրապես բացված չեն եղել, ինչի մասին են վկայել նաև ազատությունից գրկված անձանց համապատասխան բողոքները: 2010 թվականի այցելությունները ցույց են տվել, որ նշված մատյաններն արդեն առկա են:

Ինչպես Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 26-րդ կետը, այնպես էլ Եվրոպական բանտային կանոնների 15-րդ կետը, Եվրոպական վերանայված բանտային կանոնների 18.1-րդ կետը սահմանում են պահանջներ ազատությունից գրկման վայրերի ջեռուցմանը վերաբերող պահանջներ: Սա համարվում է մարդկային արժանապատվությունը հարգելու կարևոր գրավական: Եվրոպական վերանայված բանտային կանոնները նույնիսկ պարտավորեցնում է բուժաշխատողին կամ տեսչական գործառույթներ իրակաացնող մարմիններին ստուգել և բանտի ղեկավարությանը առաջարկություններ ներկայացնել բանտարկյալների պահման պայմանների, այդ թվում՝ ջեռուցման վերաբերյալ:

Հակառակ դրան, ՀՀ գործող օրենսդրությունը քրեակատարողական հիմնարկների ջեռուցման հետ կապված պահանջներ չի նախատեսում:

Ինչպես 2009 թվականի, այնպես էլ 2010 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներ կատարած այցելությունները ցույց են տվել, որ բացի «Հրազդան», «Արթիկ», «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկներից, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց պահելու մասնաշենքից, մյուսները չունեն կենտրոնացված ջեռուցման համակարգեր, խցերը և կացարանները տաքացվում են էլեկտրական սալիկներով, ինչը բավարար ջերմաստիճան չի ապահովում: Զմռան ամիսներին այդ հիմնարկների մյուս մասնաշենքերը չեն ջեռուցվում, ինչն առաջացնում է որոշակի բարդություններ: Ընդ որում, էլեկտրական սալիկները դատապարտյալները ծեռք են բերում սեփական միջոցներով: Հատկանշական է, որ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկն, օրինակ, թեև ունի կենտրոնացված ջեռուցման համակարգ, սակայն ճաշարանի ճաշասրահը չի ջեռուցվում:

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները նախատեսում են պահանջներ անազատության մեջ պահելու վայրերում գրադարանների առկայության և դրա հետ կապված բանտարկյալների իրավունքների վերաբերյալ: Մասնավորապես նույն կանոնների 40-րդ կետը սահմանում է. «Յուրաքանչյուր հիմնարկ պետք է գրադարան ունենա, որը հասանելի լինի բոլոր կատեգորիաների բանտարկյալների համար և պարունակի ինչպես զվարճալի, այնպես էլ կրթական բովանդակությամբ գործը: Պետք է խրախուսել

բոլոր բանտարկյալների գրադարանից օգտվելը»: 42-րդ կետը բանտարկյալների համար նախատեսում է նաև կրոնական գրքեր ունենալու հնարավորություն:

Ըստ Եվրոպական վերանայված բանտային կանոնների 28.5-րդ և 28.6-րդ կետերի՝ ազատությունից զրկման յուրաքանչյուր վայրում պետք է լինի բոլոր տեսակի բանտարկյալների համար նախատեսված գրադարան՝ հագեցած գեղավերստական և ուսումնական գրականությամբ: Այնտեղ, ուր դա հնարավոր է, բանտային գրադարանները ստեղծվում են հանրային գրադարանների մասնակցությամբ: Այստեղ նույնպես պահանջվում է խրախուսել բանտարկյալների՝ գրադարանից օգտվելը:

Հանցագործությունների հիմնահարցերի Եվրոպական կոմիտեն Եվրոպական բանտային կանոնների՝ խնդրանքներին և բողոքներին վերաբերող 70-րդ կանոնի մեկնաբանություններում նշել է, որ գրադարանների առկայությունը կարևոր նշանակություն ունի նաև անազատության մեջ գտնվող անձանց բողոքարկման իրավունքի իրացման համար: Մասնավորապես, գրադարանները դիտվել են այն վայրերը, ուր բանտարկյալների համար պետք է հասանելի լինեն համապատասխան մարմիններին բողոքներ ներկայացնելու ձևաթղթերը:

ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը սահմանում է, որ ուղղիչ հիմնարկում ստեղծվում է գրադարան, ընթերցարահ (91-րդ հոդվածի 4-րդ մաս) և երաշխավորում դատապարտյալների իրավունքը օգտվելու գրականությունից (12-րդ հոդվածի 1-ին 9-րդ կետ):

«Զերբարկալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածն ամրագրում է, որ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը ստեղծում է համապատասխան պայմաններ՝ թերթերից, ամսագրերից եւ այլ գրականությունից օգտվելու համար: 25-րդ հոդվածն ամրագրում է, որ կալանավորվածներին պահելու վայրերում ստեղծվում են գրադարաններ, ինչպես նաև երաշխավորում է հոգևոր գրականությունից օգտվելու հնարավորություն: Նույնաիսի պահանջներ բովանդակում են նաև Կանոնակարգը:

Վերոգրյալով հանդերձ ՀՀ ներպետական որևէ իրավական ակտ չի նախատեսում պահանջներ քրեակատարողական հիմնարկներում գրականության բնույթի, դրա պարբերական նորացման, կալանավորված անձանց և դատապարտյալների՝ գրականությունից օգտվելու, այն հետ վերադարձնելու ժամկետների վերաբերյալ:

Նման իրավակարգավորման պայմաններում բոլոր քրեակատարողական հիմնարկներում ինչպես 2009, այնպես էլ 2010 թվականների ընթացքում գրադարանների առկայությունը կրել է ձևական բնույթ: Մասնավորապես, դրանցում

գրեթե բացակայում է ժամանակակից գրականություն, և դրանք համալրված են հնացած գրքերով, որոնք առանձնակի հետաքրքրություն չեն ներկայացնում և դրված են ձևի համար: Բոլոր հիմնարկների գրադարաններն ունեն աղքատիկ ընտրանի, առավելապես բաղկացած են խորիրդային ժամանակաշրջանի գրականությունից: Գրադարաններում բացակայում է գրականություն՝ նվիրված դատապարտյալների կամ կալանավորների և ընդհանրապես մարդու իրավունքներին, դրանց պաշտպանության կառուցակարգերին: Մինչդեռ, դատապարտյալների արժեքային համակարգի վրա ներազդելու և սոցիալականացման համար հատուկ ընտրված գրականությունը կարևորագույն դեր կունենար: Քրեակատարողական հիմնարկների գրադարանավարների խոսքերով, կալանավորվածների կամ դատապարտյալների մի մասն այն կարդում է՝ այլընտրանք չունենալու պատճառով, մյուսները դադարում են գրադարան այցելել: Այս հարցի չլուծված լինելը իրավասու մարմինների անտարբերության հետևանքն է:

Նշվածը վտանգում է ազատությունից զրկված անձանց սոցիալական ռեարիլիացիան: Դրան նպաստում է նաև այն, որ գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկներում առավելապես տիրում է անգործություն: Ազատ ժամանակը լրացվում է կալանավորվածների ու դատապարտյալների կողմից կազմակերպվող խաղերով, որը միայն նպաստում է քրեակատարողական հիմնարկներում առկա «քրեական ենթամշակույթի» դրսևորումների և վերահսկողության ներքին կառուցակարգերի տարածմանը: Յետագայում հայտնվելով ազատության մեջ՝ այդ անձինք ոչ միայն պատրաստ չեն ինտեգրվելու հասարակությանը: Յակառակը՝ այդ անձինք իրենց հետ հասարակություն են բերում հիմնարկում ձեռքբերված և վերարտադրված «քրեական ենթամշակույթ», և, որպես կանոն, անմիջապես նոր հանցանք են գործում ու նորից վերադառնում քրեակատարողական հիմնարկ (հենց անզատության մեջ գտնվող անձանց խոսքերով՝ իրենք չեն պատկերացնում, թե ինչով են զբաղվելու ազատվելուց հետո):

Սրա հետ կապված պետք է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում գրանցվել է սոցիալ-հոգեբանական ծառայության հիմնականում ցածր մասնագիտական մակարդակ: Օրինակ՝ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի սոցիալական աշխատողը կրթությամբ մաթեմատիկոս է: Քրեակատարողական հիմնարկների մեծ մասում սոցիալական աշխատողի, հոգեբանի հաստիքները թափուր են. բարձր ռիսկայնություն ենթադրող և պետության կողմից ցածր վարձատրվող աշխատանքը հետաքրքիր չէ մասնագետների համար, որի հետևանքով կալանավորված անձինք և դատապարտյալները հաճախ չեն ստանում բավարար մասնագիտական աջակցություն, այդ թվում մասնագիտական

աշխատանք չի կատարվում՝ հասարակությանը որպես լիարժեք անդամ վերադարձնելու ուղղությամբ:

Գրեթե բացակայում են արհեստանոցներ, որի հետևանքով դատապարտյալները ոչ միայն հեռանում են սոցիալապես օգտակար գործունեություն իրականացնելու ունակությունից և հեռանում հասարակությունից, այլև հիմնարկում իրենց ժամանցը լցնում են ապակառուցողական հաղորդակցությամբ և խաղերով։ Այս հանգամանքը հատկապես նկատելի է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում, որտեղ անչափահասների հետ գրեթե ոչ մի դաստիարակչական, լուսավորչական և քարոզչական աշխատանք չի տարվում։ Նրանց ժամանցն անցնում է տարերայնորեն, ինաստագուրկ ձևով։ Գոյություն չունի որևէ խմբակ կամ օգտակար գործունեությամբ զբաղվելու անհրաժեշտություն, արդյունքում անչափահասներն ամրող օրն անց են կացնում պարապ խոսակցությունների մեջ։ Անհրաժեշտ է սոցիոլոգի և հոգեբանի լուրջ, համակարգված մոտեցում և մշտական աշխատանք։ Բացի այդ, անհրաժեշտ է անչափահասներին զբաղեցնել պիտանի ուսուցողական գործունեությամբ։

Քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է այնպիսի երևույթ, երբ միևնույն խցում համատեղ պահվում են տարբեր տնտեսական-ֆինանսական վիճակ ունեցող, հաճախ՝ ծայրահեղ աղքատ և հարուստ անձինք։ Ծայրահեղ աղքատ անձինք չեն կարող ակնկալել աջակցություն իրենց ազգականներից, որոնք գտնվում են նույն անապահով վիճակում, և ընդհակառակը՝ ֆինանսապես ապահով դատապարտյալների մի մասի մոտ առկա է եկամուտների աղբյուր, ֆինանսապես ապահով ազգականներ, ինչի շնորհիվ հնարավորություն են ստանում հոգալ իրենց կարիքները ազատությունից զրկման վայրում։ Համապատասխանաբար, նմանատիպ բոլոր դեպքերում առաջանում է կալանավորվածների և դատապարտյալների դասակարգում համապատասխան իրավունքներով ու պարտականություններով։ Քրեակատարողական ծառայողների խոսքերով՝ իրենք հաճախ նույն խցում են բնակեցնում ծայրահեղ անապահով և ապահով անձանց, որպեսզի վերջիններս իրենց դրսից հասցվող սննդի և այլ բարիքների միջոցով աջակցեն խցում գտնվող աղքատ անձանց։ Դրականի հետ միասին այս երևույթն ունի նաև բացասական նշանակություն, քանի որ ֆինանսապես անապահով անձինք ուղղակի կախման մեջ են դրվում մյուսներից, և վերջիններս կարողանում են նրանց վերահսկել ու շահագործել։ Այդպիսով, քրեակատարողական հիմնարկ է բերվում հասարակության մեջ առկա խտրականությունը տնտեսական հիմքի վրա։

## 1.7. Հոգեբանական իիմնախնդիրներ

ՀՅ արդարադատության նախարարության քրեակատարողական իիմնարկներում կատարված հոգեբանական ուսումնասիրությունները հնարավորություն են տվել վեր հանել մի շարք իիմնախնդիրներ՝ կապված իիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց հոգեբանական վիճակի, նրանց հետ տարվող հոգեբանական աշխատանքների որակի, ինչպես նաև ՔԿՀ-ի աշխատակիցների հոգեբանական դժվարությունների հետ: Ըստ այդմ էլ ուսումնասիրության արդյունքները նպատակահարմար է ներկայացնել նշված երեք ուղղություններով:

### **Անազատության մեջ պահվող անձանց հոգեբանական վիճակը և խնդիրները**

Առաջին հերթին անազատության մեջ պահվող անձանց հոգեբանական վիճակի և ՔԿՀ-ներում հոգեբանական մթնոլորտի համար առանձնակի բացասական ազդեցություն է ունենում շատ իիմնարկների գերբնակեցվածությունը (օրինակ՝ «Նուբարաշեն», «Կոշ» քրեակատարողական իիմնարկներում): Յայտնի է, որ ինքնին անազատությունը, գործելու սահմանափակ հնարավորությունները և հարկադրանքը անձի հոգեկանի վրա ներազդող լուրջ բացասական գործոններ են, սակայն որոնց առկայությունը քրեակատարողական իիմնարկում օրինաչափ է պատիժը կոռոի համար և մեծամասամբ ընկալվում է որպես իր ներկա դրության բնականոն և սպասելի իրողություն: Սակայն գերբնակեցվածությունը զգալիորեն ուժեղացնում է սրբեսային գործոնների ազդեցությունը, քանի որ այն էականորեն փոքրացնում է ազատազրկված անձի անձնական տարածությունը, ինչպես նաև խախտում է քրեակատարողական իիմնարկում առկա անհրաժեշտ իրատապ (օրինակ՝ զբոսանք, բուժօգնություն, հոգեբանական ծառայություն) և ժամանցային (օրինակ՝ մարզադահլիճ, գրադարան) հնարավորություններից օգտվելու իրավունքի ամբողջական իրագործումը: Անձնական տարածության և պրիվատության խխտ նվազեցումը (հատկապես հանրակացարային պայմաններում) ազատազրկված անձանց ազրեսիան և ապահարմարումը խթանող ակնհայտ գործոն է, մասնավորապես շոգ եղանակային պայմաններում: Իսկ գաղտնիք չէ, որ քրեակատարողական իիմնարկներում պահվող անձանց զգալի մասն իսկզբանե ունի հակվածություն իմպուլսիվության և ազրեսիայի, ինչի ճնշմանն ու վերահսկմանը ուղղված միջոցառումները չափազանց շատ ջանք են խլում իիմնարկների աշխատակիցներից:

Նույն նկատառումներից ելնելով հարկ է նշել հիմնարկների մեջ մասի ծայրահեղ անբավարար սանիտարա-հիգիենիկ և կոմունալ-կենցաղային պայմանները: Մասնավորապես խոսքը գնում է բանտախցերի, պատժախցերի, բաղնիքների, ճաշարանների ներքին հարդարման, խոնավության, կոյուղու, օդափոխման անբավարար վիճակի մասին: Առանձնակի պետք է նշել պատժախցերի անմիտար պայմանները, որոնք որոշ քրեակատարողական հիմնարկներում նույնիսկ գուրկ են անհրաժեշտ քանակի քնելատեղերից և անկողնուց (օրինակ՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ): Նման պայմանները ազատազրկված անձանց համար պատժի կրումը դարձնում են նսեմացուցիչ, ինչը երբեք չի կարող նպաստավոր լինել նրանց հարմարման և անձի ուղղման, վերափոխման համար: Ընդհակառակը, նման կենցղային պայմանները մեծացնում են ազատազրկվածների ապահարմարումը, ավելացնում ազրեսիան և անհարգալից վերաբերմունքը ինչպես քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների և միմյանց, այնպես էլ՝ պետության և հասարակության նկատմամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ազատությունից գրկված անձինք մեծամասամբ խուսափում են քրեակատարողական հիմնարկների վարչակազմների դեմ ուղղակի բողոքներից՝ վախենալով դրանց հետևանքներից: Դրա հետ միասին, նկատվել է վարչակազմների և կալանավորված անձանց ու դատապարտյալների միջև հարաբերությունների անխուսափելի բներացում, ինչը, ամենից առաջ, պայմանավորված է քրեակատարողական ծառայողների նկատմամբ վստահության ցածր մակարդակով, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում գործող վարչի «ներքին կանոններով», որոնց համաձայն «չի խրախուսվում» վարչակազմի հետ որևէ համագործակցություն:

Ազատազրկված անձանց ապահարմարվածության մեկ այլ ցուցանիշ է այն, որ նրանցից շատ քչերն են ընդունում իրենց նկատմամբ կայացված դատական ակտի արդարացիությունը. մեծամասամբ նրանք հերքում են իրենց մեղքի ծանրությունը և համաձայն չեն պատժաչափի հետ: Սա մեծացնում է ներքին ըմբռստության չափը, իսկ երբեմն էլ՝ սադրիչ գործողություններ կատարելու հակվածությունը: Արդարադատության նկատմամբ նման բացասական վերաբերմունքով է պայմանավորված նաև այսպես կոչված «չբողոքելու ներքին օրենքի» առկայությունը:

Մյուս կողմից, վաղաժամ ազատման խիստ փոքրաթիվ օրինակները, իրենց հերթին, մեծացնում են ազատազրկված անձանց հուսահատությունը և հիասթափությունը, մի կողմից, և իշեցնում օրինակելի վարք դրսերելու մոտիվացիան՝ մյուս կողմից: Դայտնի է, որ վարչի և անձի փոփոխությունները

առաջին հերթին Ենթադրում են նրա համոզմունքային համակարգի վերակառուցում, ինչը հնարավոր է միայն մեծ մոտիվացիայի պարագայում: Նման պայմաններում գործնականում չկա այն նպատակը, ինչի համար ազատազրկվածները ցանկանան փոխել իրենց հայացքները և վարքը: Պատահեցին մի շարք օրինակներ, երբ ՔԿՀ-ի աշխատակազմը բազմիցս դրականորեն բնութագրել է այս կամ այն ազատազրկվածին, սակայն վաղաժամ ազատումը մշտապես մերժվել է՝ անհասկանալի պատճառներով:

Անազատության մեջ պահվող անձանց մոտ նկատվող *տագնապի և թշնամանքի* բարձր ցուցանիշներն ունեն երկու խումբ պատճառներ: Մի կողմից դա պայմանավորված է ազատազրկվածների անձնային որոշակի առանձնահատկություններով և յուրահատուկ համոզմունքային համակարգով (հիմնականում՝ հակասողիալական), որոնցով նրանք մեծամասամբ մուտք են գործում ազատությունից զրկման վայր: Սա առավելապես արտահայտված է քրեակատարողական հիմնարկներում բազմաթիվ անգամներ հայտնվող ազատազրկվածների մոտ: Մյուս կողմից, թշնամանքն ու տագնապը հրահրվում են հենց քրեակատարողական հիմնարկում արդեն իսկ նշված պատճառներով, ինչպես նաև լարված հարաբերություններով ինչպես հարկադրանք հրականացնողների, այնպես էլ այլ ազատազրկվածների հետ: Դիմնականում գործում է «միայնակ գայլի» հոգեբանությունը, համաձայն որի ոչ-ոքին վստահել չի կարելի և «դու ես քո գլխի տերը»: Նման դիրքորոշումները, բնականաբար, մշտական տագնապային սպասման և կասկածամտության աղբյուր են, ինչը իրականում արդարացված է նրանով, որ այլ ազատազրկվածներ նույնպես նման կերպով են տրամադրված: Ստացվում է, որ տագնապն ու թշնամանքը մշտապես ամրապնդվում են: Սրան գումարվում են նաև քրեական բարդ հիերարքիկ հարաբերությունների պահանջները, ինչպես նաև ընդհանուր անվստահության մթնոլորտը:

Այս ամենը սրում է ազատազրկվածների հիմնական հուզական խնդիրները, որոնցից յուրաքանչյուրը առանձին վերցրած կարող է վտանգել ինչպես անհատի հոգեբանական վիճակը և հարմարումը, այնպես էլ հրահրել խմբային հակազդումներ և կոնֆլիկտներ: Նշված հիմնախնդիրները հույժ կարևոր են դարձնում քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հետ հոգեբանական աշխատանքների կազմակերպումը՝ ինչպես հիմնարկում նրանց հարմարման, առաջացող կոնֆլիկտներն ու հոգեբանական խնդիրները կանխելու և լուծելու համար, այնպես էլ պատիժը կրելուց հետո հասարակությունում ռեսոցիալիզացիայի և վերահիմնեգրման համար:

## **Անազատության մեջ պահվող անձանց հետ տարվող հոգեբանական աշխատանքների խնդիրները**

Անազատության մեջ գտնվող անձանց հոգեբանական վերականգնման համար կարևոր է քրեակատարողական հիմնարկներում հոգեբանական աշխատանքների հստակ և պատշաճ կազմակերպումն ու իրականցումը: Անազատության մեջ գտնվող անձինք հոգեբանական աջակցության և հոգեթերապևտիկ աշխատանքների կարիք ունեն: Սա պայմանավորված է ազատությունից գրկվածների անձնային առանձնահատկություններով, քրեակատարողական հիմնարկների սոցիալ-հոգեբանական մթնոլորտով և նախորդ կետում նշված հիմնախնդիրներով: Այդ իսկ պատճառով կարևոր է զուգորդել իրավական և հոգեբանական ներգործության միջոցները: Քրեակատարողական հիմնարկներում հարկադրանքի լծակներ կիրառելուն զուգահեռ անհրաժեշտ է լուրջ հոգեբանական աշխատանքների անցկացում՝ հարկադրանքի անհրաժեշտության ընկալումների ծևավորում և այլն:

Հոգեբանական աշխատանքները քրեակատարողական հիմնարկում ունեն իրենց հստակ յուրահատկությունները, որոնք եականորեն տարբերում են քրեակատարողական հիմնարկի հոգեբանի աշխատանքը այլ հոգեբանի աշխատանքից: Այդ յուրահատկությունները հիմնականում պայմանավորված են քրեակատարողական հիմնարկի առանձնահատկություններով, որոնցից ամենագլխավորը վերոնշյալ անվատահության մթնոլորտն է: Յայտնի է, որ հոգեթերապևտիկ արդյունավետ աշխատանքի համար առաջնահերթ պայման է փոխվստահելի հարաբերությունների կայացումը հոգեբանի և այցելուի միջև: Սակայն քրեակատարողական հիմնարկում սա ներկայումս գործնականում շատ դժվար հասանելի նպատակ է:

Այդ իսկ պատճառով էլ ավելի է կարևորվում ազատությունից գրկման վայրերի հոգեբանի մասնագիտական որակավորման և գործնական պատրաստվածության հիմնախնդիրը: Ցավոք, իրավիճակը չափազանց անբավարար է: Ուսումնասիրված վայրերի մեծամասնության հոգեբանները կամ մանակավարժական բուհերի շրջանավարտներ են, կամ երկրորդ մասնագիտությամբ են հոգեբան: Օրինակ՝ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում հոգեբան և սոցիալական աշխատող ընդհանրապես չկա:

Հիմնարկներում աշխատող հոգեբանները չունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում պատժի կրման վայրերում աշխատելու համար: Գործնականում բացակայում են հոգեբանների որակավորման բարձրացման և փորձի փոխանակման լուրջ ծրագրեր, մեթոդաբանական բազան շատ աղքատիկ է,

իսկ աշխատանքների ընթացակարգը՝ անմշակ: Շատ հիմնարկներում հոգեբանները նշում են, որ գործնականում չեն իմանում, թե ինչպես աշխատել ազատազրկված անձանց հետ, ինչպես կազմակերպել հոգեթերապևտիկ և հոգեկանխարգելիչ աշխատանքները: Առկա է նաև սոցիալ-հոգեբանական բաժնի աշխատողների գործառույթների ոչ հստակություն:

Գործնականում քրեակատարողական հիմնարկում չի իրականացվում երկարաժամկետ հոգեթերապևտիկ աշխատանք, ինչպես նաև խմբային աշխատանքներ՝ համապատասխան հմտությունների, սենյակային պայմանների և հոգեբանի նկատմամբ վստահության պակասի պատճառով: Վերջինիս անուղղակիորեն նպաստում է նաև հոգեբանի կողմից զինվորական համագույնի պարտադիր կրումը, ինչը իսկօքանե խոչընդոտող հանգամանք է վստահելի և անկաշկանդ մթնոլորտ ստեղծելու համար:

Բացի այդ շատ քրեակատարողական հիմնարկներում բացակայում են հոգեբանական աշխատանքներ իրականացնելու համար նվազագույն պայմանները (օրինակ՝ «Սևան», «Աբովյան» քրեակատարողական հիմնարկներ): Դայտնի է, որ հոգեբանական աշխատանքների կարևորագույն պայմաններից է գաղտնապահությունը և միջավայրի ապահովությունը: Այս առումով գրեթե բոլոր ուսումնասիրված հիմնարկներում առկա են լուրջ բացքողումներ:

Հոգեբանական ախտորոշման ընթացակարգը հստակ չէ: իրականացվում են որոշ թեստավորումներ և զրույցներ, սակայն որոնց նպատակները այնքան էլ հասկանալի չեն: Առկա է մասնագիտական գրականության և մեթոդաբանական բազայի աղքատիկություն:

Հոգեկանխարգելիչ աշխատանքներ հազվադեպ են իրականացվում, մանավանդ խմբային հիմունքներով: «Կոշ» քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունն ու հոգեբանը հետաքրքրվածություն հայտնեցին խմբային աշխատանքներ կազմակերպելու հետ կապված, սակայն չկան անհրաժեշտ կապերը և միջոցները՝ վերապատրաստվելու և կատարելագործվելու համար:

Հոգեբանական արագ արձագանքման մեխանիզմը քրեակատարողական հիմնարկներում բավարար չէ, ինչի համար կա նաև օբյեկտիվ պատճառ յուրաքանչյուր հիմնարկ սովորաբար ունենում է մեկ հոգեբան, ինչը ծայրաստիճան քիչ է (օրինակ՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի երեք տեղամասներում աշխատում է մեկ հոգեբան): Ակնհայտ է, որ կադրերի նման սղության պայմաններում նույնիսկ անհրաժեշտ մասնագիտական որակավորման առկայության դեպքում հնարավոր չէ իրականացնել ամբողջական հոգեբանական ախտորոշիչ, երկարատև հոգեթերապևտիկ և կանխարգելիչ միջոցառումներ:

Վերոնշյալի հետևանքով փաստացիորեն դժվարանում է քրեակատարողական հիմնարկում հոգեբանի վստահության ձեռք բերման հիմնախնդրի լուծումը: Ազատազրկված անձանց գերակայող դիրքորոշումները տարածվում են նաև հոգեբանների վրա: Վերջիններն էլ, իրենց հերթին, նկատելով դա, ինչպես նաև սեփական աշխատանքի անբավարար արդյունավետությունը, հետզիետե կորցնում են մոտիվացիան և ցանկությունը ինչ-որ կերպ բարելավելու աշխատանքը:

### **Քրեակատարողական ծառայողների հոգեբանական դժվարությունները**

Այցելությունների ընթացքում տեղի են ունեցել նաև հանդիպումներ քրեակատարողական հիմնակների քրեակատարողական ծառայողների հետ՝ նրանց աշխատանքի առանձնահատկությունները պազելու, նրանց առջև ծառացած խնդիրներին ծանոթանալու նպատակով: Վերջիններս արտահայտել են սոցիալական ծանր պայմանների հետ կապված բողոքներ, կատարած աշխատանքի և դրա դիմաց վարձատրության անարդարացիության վերաբերյալ:

Ընդհանուր առմանք աշխատակիցների մոտ նկատվում են աշխատանքից հիասթափության և դեմոտիվացվածության ցուցանիշներ, ինչը չի կարող բացասաբար չանդրադառնալ նրանց աշխատանքի որակի վրա: Հոգեբանական ծառայությունների գործառույթների շարքում պետք է լինեն նաև պարբերական կանխարգելիչ և հոգեբերապես տիկ աջակցություններ նաև ծառայողներին, որոնք գտնվում են տևական սթրեսային պայմաններում և մշտապես ունեն չգնահատվածության զգացողություն:

Քրեակատարողական ծառայողների նշված հոգեբանական դժվարություններն էլ ավելի են հեռվացնում նրանց ազատազրկվածների խնդիրների լուծումից, մեծացնում են անբավարարվածության, ջղայնության և անարդարացիության զգացողությունները: Արդյունքում ազատազրկված անձնաց հետ տարկող ուղղիչ աշխատանքները դառնում են չափազանց անարդյունավետ:

## 2. ՀՈԳԵԲՈՒԺԱՐԱՆՆԵՐ

Մարդու իիմնարար անձնական բարիք համարվող հոգեկան առողջության, հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի ստեղծումը մեր Երկրում ունի առանձնակի կարևորություն:

Այս ոլորտում կարևոր նշանակություն ունեցող միջազգային ակտերից են համարվում Հոգեկան հիվանդ անձանց և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքները, որոնք ընդունվել են ՍԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1991 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 46/119 բանաձևով: Դրանում սահմանված են դրույթներ, որոնք վերաբերում են հոգեկան հիվանդություն ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքին, նրանց բուժմանը, տրամադրվող դեղամիջոցներին, բուժման գործում հասարակության և մշակույթի ունեցած դերին ու նշանակությանը, նրանց իրավունքներին ու պարտականություններին: Քննարկվող ոլորտում կարևոր նաշանակությամբ է առանձնանում նաև Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի 1983 թվականի փետրվարի 22-ի թիվ R(83)2 հանձնարարականը «Կամքին հակառակ հիվանդանոց տեղափոխված հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավական պաշտպանության մասին»:

ՀՅ ներպետական իրավական ակտերի թվում կարևոր նշանակություն ունի «Հոգեբուժական օգնության մասին» ՀՅ օրենքը, որը կարգավորում է մարդու իիմնարար անձնական բարիք համարվող հոգեկան առողջության, հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հետ կապված հարաբերությունները, կանոնակարգում է հոգեկան առողջության ոլորտում միջազգային իրավունքի նորմերով, «Մարդու իրավունքների և իիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով և ՀՅ Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների ու ազատությունների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծման գործընթացները:

Կարևոր նշանակություն ունի նաև ՀՅ կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի թիվ 350-Ն որոշումը, որով հաստատվել է արտահիվանդանոցային և հիվանդանոցային հոգեբուժական բժշկական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին:

Պաշտպանի՝ որպես կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ, 2010 թվականի գործունեության ընթացքում այցելություններ են կատարվել ՀՅ-ում գործող հոգեբուժական հաստատություններ: Խոսքը, նախևառաջ, վերաբերում է «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ Ավանի կլինիկային, ուր կատարած

այցելության ընթացքում պարզվել է, որ կլինիկան ունի միայն ստացիոնար բաժանմունքներ. այն դիսպանսեր բուժում չի իրականացնում: Կլինիկան նախատեսված է 100 հիվանդի բուժման համար, սակայն այժմ կլինիկայում 2010 թվականի մայիս ամսվա դրությամբ գտնվել են 83 հիվանդ: Դիվանդասենյակները հիմնականում նախատեսված են 4 և 6 անձի համար:

Պարզվել է, որ բոլոր բաժանմունքներում տեղադրված են հեռուստացույցներ, խոհանոցը գտնվում է բարվոք վիճակում, կլինիկայում առկա է կենտրոնացված ջեռուցման համակարգ:

Բուժում ստացող քաղաքացիների կողմից բուժանձնակազմի դեմ բողոքներ չեն ներկայացվել:

Կատարված դիտարկմամբ դեռ լուծում չստացած խնդիրներ են համարվում՝

- կլինիկայի ճաշարանի գտնվելը կիսանկուղային հարկում՝ խիստ անբավարար վիճակում: Անհրաժեշտ է ճաշարանը տեղափոխել կիսանկուղային հարկից 1-ին հարկ.

- կլինիկայի բաժանմունքների սանհանգույցների ոչ բարվոք վիճակը:

«Դոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ Նորքի կլինիկա կատարած այցելության ընթացքում պարզվել է, որ այն ունի միայն ստացիոնար բաժանմունքներ: Կլինիկան դիսպանսեր բուժում չի իրականացնում: Այն նախատեսված է 125 հիվանդի բուժման համար, սակայն այժմ կլինիկայում բուժվում են 72 հիվանդ, որոնցից 2-ը՝ դատարանի որոշման հիման վրա (ոչ կամովին): Դիվանդասենյակները հիմնականում նախատեսված են 2 և 4 անձի համար: Կլինիկան ունի վճարովի պալատներ այն հիվանդների համար, որոնք ցանկանում են ավելի բարեկարգ սենյակներում բուժվել:

Չնայած նրան, որ կլինիկան վերանորոգման կարիք ունի, բյուջեով դրա համար հատկացված միջոցներ չկան: Կլինիկայի միջոցներով 1-ին բաժանմունքում վերանորոգվել են մեկ սենյակ և մեկ սանհանգույց:

Բոլոր հիվանդները բուժումը ստանում են պետական պատվերի շրջանակում (օրեկան 6000 դրամ), պետության կողմից տրամադրվող միջոցները լիարժեք բավարարում են բուժում ստացող անձանց անհրաժեշտ դեղորայքի և սննդի համար: Խրոնիկ հիվանդների բուժում կլինիկան չի իրականացնում: Դիսպանսեր հսկողության հիվանդը վերցվում է իր ցանկությամբ: Բացառություն են կազմում շրջապատի համար սոցիալապես վտանգ ներկայացնող հիվանդները, որոնք կլինիկայից դուրս գրվելուց հետո անցնում են ամբուլատոր հարկադիր բուժում:

Կլինիկան ունի գինակոչիկների բաժանմունք, տղամարդկանց և կանանց բաժանմունքներ, գործում է էրգոտերապիայի սենյակ, որտեղ հիվանդների հետ համապատասխան աշխատանք է կատարում հոգեբանը:

Բոլոր բաժանմունքներում տեղադրված են հեռուստացույցներ, խոհանոցը գտնվում է բարվոք վիճակում, կլինիկայում առկա է կենտրոնացված ջեռուցման համակարգ:

Կլինիկայում բուժում ստացող անձինք առանձին հանդիպումների ընթացքում հայտնել են, որ բուժանձնակազմի անդամների դեմ որևէ բողոք չունեն, իրենց նկատմամբ ցուցաբերվում է հոգատար վերաբերմունք, օգտվում են տպագիր մանուլից:

Կատարված դիտարկմամբ, որպես լուծում չստացած խնդիր, պետք է նշել այն, որ կլինիկան, մասնավորապես՝ սանհանգույններն ու հիվանդասենյակները վերանորոգման կարիք ունեն:

Այցելություն է կատարվել նաև «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ Նուբարաշենի կլինիկա, որտեղ 2010 թվականի ապրիլ ամսվա դրությամբ բուժում էր ստանում 310 մարդ: Հիվանդասենյակները հիմնականում նախատեսված են 6 և 10 անձի համար:

Բոլոր հիվանդները բուժումը ստանում են պետական պատվերի շրջանակում (օրական 6000 դրամ): Պետության կողմից տրամադրվող միջոցները լիարժեք բավարարում են միայն բուժում ստացող անձանց անհրաժեշտ դեղորայքի և սննդի համար: Պարզվել է, որ անկողնային պարագաներ արդեն մի քանի տարի է ընդհանրապես չեն տրամադրվում:

Բոլոր բաժանմունքները ենթակա են վերանորոգման, կլինիկայում առկա է կենտրոնացված ջեռուցման համակարգ, խոհանոցը գտնվում է բարվոք վիճակում, սակայն կլինիկա կատարած այցելության օրվա ճաշացուցակից բացակայում էր միս կամ մսամթերքը, ճաշարանը չուներ սառնարան, պատրաստված ճաշերը 24 ժամ չեն պահպում: Կլինիկայի անձնակազմը հստակ տեղեկացված չէ ինչ իրավական ակտերով են կանոնակարգվում հիվանդներին տրամադրվող սննդի տեսակներն ու չափաբաժինները:

Կլինիկայի 6-րդ բաժանմունքում պահպում են քրեական գործով վարույթի ընթացքում կալանքը որպես խափանման միջոց ընտրված անձինք՝ դատահոգեբուժական փորձաքննություն անցնելու նպատակով: Այդ բաժանմունքում պահպող հիվանդները թվով տասն են և չեն օգտվում զբոսանքի և հեռախոսակապի իրավունքից:

Բաժանմունքը չունի զբոսահրապարակ, քարտային հեռախոս և տեսակցության համար նախատեսված անհրաժեշտ սենյակներ: Տրամադրված տեսակցությունները չեն գրանցվում:

Կալանավորված անձանց պահպանությունն իրականացվում է ՀՀ ոստիկանության պետական պահպանության ծառայողների կողմից: Վերջիններս իրականացնում են միայն պահպանություն. Երբ կալանավորվածին անհրաժեշտ է շտապ տեղափոխել այլ բժշկական հաստատություն, առաջանում են խնդիրներ:

### 3. ՄԱՆԿԱՏԵՐ ԵՎ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՑՆԵՐ

Կանխարգելման անկախ ազգային մեխանիզմի կարգավիճակով 2010 թվականի ընթացքում այցելություններ են իրականացվել նաև Հայաստանի Հանրապետությունում գործող մանկատներ: Դրանց գործունեության դիտարկումն ունի առանձնակի կարևորություն:

Խոսքը, նախևառաջ, վերաբերում է «Երևանի «Մանկան տուն» պետական ոչ առևտության կազմակերպությանը (ՊՈԱԿ): Այն ստեղծվել է ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 1730-Ն որոշմամբ:

Այդ որոշմամբ «Երևանի «Մանկան տուն» մանկատան հիմնական նպատակ է սահմանվել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի ապահովումը: Կազմակերպության գործունեության առարկան սահմանվել է կազմակերպությունում խնամվող մինչև 6 տարեկան երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, սոցիալ-հոգեբանական, բժշկական վերականգնման աշխատանքների իրականացումը, սննդով, հագուստով և այլ կենցաղային անհրաժեշտ իրերով ապահովումը, խնամքի ու դաստիարակության ապահովումը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումը, նրանց՝ այլ մանկական խնամատարական կազմակերպություններ տեղափոխումը:

Մանկատուն կատարված այցելության ընթացքում պարզվել է, որ այն նախատեսված է 1-ից մինչև 6 տարեկան առավելագույնը 100 երեխայի համար: Տարեկան կտրվածքով երեխաների թիվը կազմում է 70-ից 80, որոնցից 20-25 տոկոսը մինչև 6 տարեկանը լրանալը որդեգրվում են, 20 տոկոսը վերադառնում են իրենց կենսաբանական ընտանիք, 10 տոկոսը կազմում են մտավոր հետամնացություն ունեցող երեխաները, որոնք ել տեղափոխվում են Գյումրու մանկատուն: Մնացած երեխաները 6 տարեկանը լրանալուց հետո տեղափոխվում են այլ համապատասխան մանկատներ:

Մանկատանը գործում է 7 բաժանմունք, որից մեկը կարանտինային է, իսկ մյուսները՝ ըստ տարիքային խմբերի: ՊՈԱԿ-ում լուծված է անհրաժեշտ մասնագիտությամբ աշխատակիցների խնդիրը և բոլոր հաստիքները համալրված են: Սկսած 3 ամսեկան հասակից անհրաժեշտ բոլոր պատվաստումները երեխաներին կատարվում են տեղում: Պետության կողմից տրամադրվող գումարը լիարժեք բավականացնում է երեխաների անհրաժեշտ կարիքները հոգալու համար:

Տնօրենի ուղեկցությամբ Պաշտպանի ներկայացուցիչները շրջել են ՊՈԱԿ-ի տարածքով, ծանոթացել խոհանոցի, լվացքատան, երեխաների ննջասենյակների և խաղասենյակների պայմաններին:

Նշված բոլոր շինությունների պայմանները կարելի է գնահատել իդեալական, քանի որ որոնք հագեցած են ժամանակակից անհրաժեշտ բոլոր պարագաներով, որոնք համաձայն փակցված ցուցատախտակների՝ տարբեր բարերարների նվիրատվությամբ են կատարվել:

Միակ չլուծված խնդիր կարելի է համարել այն, որ վատթար վիճակում է գտնվում պահեստի մասնաշենքը, որը հիմնանորոգման կարիք ունի:

«Երևանի «Զատիկ» մանկատուն» ՊՈԱԿ-ը ստեղծվել է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի թիվ 209-Ն որոշմամբ, որի հիմնական նպատակն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի ապահովումն է: Ըստ ՀՀ կառավարության նշված որոշմամբ՝ այն նախատեսված է 3-18 տարեկան երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքների իրականացման, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության աջակցելու, նյութական ու կենցաղային պահանջների բավարարման, խնամքի և դաստիարակության ապահովման, ուսուցման ու բժշկական օգնության կազմակերպման, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով որդեգրության կամ խնամակալության հանձնելու միջոցով նրանց հետագա կյանքի կազմակերպման համար:

Այցելության ընթացքում պարզվել է, որ մանկատանը գտնվում է 6-18 տարեկան 65 երեխա և 18 տարեկանից բարձր 40 երեխա:

Մանկատան խոհանոցի, լվացքատան, երեխաների ննջասենյակների և խաղասենյակների պայմանները կարելի է գնահատել բավարար: Մանկատանը գործում են պարի, երաժշտության խմբակներ, իսկ մանկատնից դուրս երեխաները այցելում են նաև նկարչության և սպորյային խմբակներ:

Մանկատան տնօրինության փոխնոցմամբ 2010 թվականի պետալան բյուջեյով մանկատան երեխաների բնակարանային ֆոնդի համար գումարներ նախատեսված չեն:

Յայաստանի Յանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնական նպատակն առանց ծնողական խնամքի մնացած, ինչպես նաև մտավոր և ֆիզիկական արատներ ունեցող երեխաների շուրջօրյա խնամքի ապահովումն է:

«Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը ստեղծվել է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի թիվ 210-Ն որոշմամբ: Մանկատան հիմնական նպատակն առանց ծնողական խնամքի մնացած, ինչպես նաև մտավոր և ֆիզիկական արատներ ունեցող երեխաների շուրջօրյա խնամքի ապահովումն է: Իսկ

գործունեության առարկան սահմանված է մինչև 18 տարեկան Երեխաների բժշկավերականգմողական, սոցիալ-հոգեբանական և ինտեգրման աշխատանքների իրականացումը, նրանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն աջակցելը, նյութական և կենցաղային պահանջների բավարարումը, խնամքի ու դաստիարակության ապահովումը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումը:

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ կատարած այցելության ընթացքում պարզվել է, որ այնտեղ գտնվում է 92 Երեխա: Մանկատանը գործում է 5 խումբ, որից 3-ը՝ դպրոցականների, 2-ը՝ փոքրահասակների համար է:

Մանկատան խոհանոցի, լվացքատան, Երեխաների ննջասենյակների և խաղասենյակների պայմանները կարելի է գնահատել բավարար: Մանկատանը գործում է պարի, գորգագործության և թատերական խմբակներ:

Մանկատան տնօրինության փոխանցմանը մեկ Երեխայի համար նախատեսված է 1207 դրամ՝ սննդի և դեղորայքի համար: Հատկացված գումարները, սակայն, չեն բավարարում հագուստի, սպիտակեղենի և տնտեսական ապրանքների համար: Դասագրքերի համար ընդհանրապես ֆոնդ չկա: Առաջմն չլուծված են նաև մանկատան տարածքի ցանկապատի և միկրոավտոբուսի հետ կապված հարցերը:

2010 թվականի ընթացքում այցելություն է իրականացվել նաև «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ:

Այն ստեղծվել է ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1905-Ն որոշմամբ, որի հիմնական նպատակ է սահմանվել միայնակ, սոցիալապես անապահով տարեց անձանց շուրջօրյա խնամքի ապահովումն է: ՊՈԱԿ-ի գործունեության առարկան կազմակերպությունում խնամվող տարեցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, նրանց սոցիալ-հոգեբանական ու բժշկական օգնության կազմակերպումը, խնամքի իրականացումը, սննդով, հագուստով և անհրաժեշտ այլ կենցաղային իրերով ապահովումն է:

Տուն-ինտերնատ կատարած այցելության ընթացքում պարզվել է, որ տուն-ինտերնատը նախատեսված է 230 անձի համար. այցելության պահին այնտեղ գտնվում էր 224 անձ:

ՊՈԱԿ-ում գործում է ժամանակակից տեխնիկական հագեցվածությամբ կաթսայատուն, ինչը հնարավորություն է ստեղծում ապահովել շուրջօրյա կենտրոնացված ջեռուցումը, լվացքատան բնականոն աշխատանքը, խոհանոցում և լոգարաններում՝ մշտական տաք ջրի առկայությունը: Գոյություն ունի գրադարան, որը հագեցված է բազմաժանր գեղարվեստական գրականությամբ (մոտ 5000 անուն գիրք): Բացի գրքերից գրադարանը ստանում է նաև տպագիր մամուլ:

Սննդակարգը և բնակիչներին հատկացվող սննդի չափաբաժինը համապատասխանում են ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին: ճաշարանը նախատեսված է 150 անձի համար, իսկ մնացածները, ովքեր առողջության պատճառով չեն կարողանում սնվել ճաշարանում՝ աշխատակիցների օգնությամբ սնվում են իրենց սենյակներում:

ՊՈԱԿ-ում գտնվող տարեղ անձանց կողմից բնակության պայմանների վերաբերյալ որևէ դժգոհություն չի արտահայտվել, երախտագիտությամբ է նշվել տուն-ինտերնատի անձնակազմի կողմից ցուցաբերվող հոգատար վերաբերմունքը:

Դարկ է նկատել, որ «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի շենքը շահագործման է հանձնվել 1990 թվականին և նոր միայն այս տարի սկսվել են իրականացվել սանհանգուցների շինարարական և սենյակների վերանորոգման աշխատանքներ: